Այսօր մենք միջին դպրոցի սովորողների և ընկեր Գրետայի հետ կատարեցինք մաթեմատիկայի ստուգատեսի 4-րդ կանգառը՝ հեծանիվ: Սկզբում մեզանից յուրաքանչյուրը ընկեր Անուշի և ընկեր Գրետայի օգնությամբ չափեց և գրանցեց մեր զարկերակի զարկերի քանակը մեկ րոպեում: Դրանից հետո նստեցինք հեծանիվը, միջին դպրոցի սովորողները միացրեցին վայրկենաչափը: Մեզանից յուրաքանչյուրը հեծանիվով քշեց 40 մետր՝ գնալ, վերադառնալ : Միջին դպրոցի սովորողները գրանցում էին ժամանակը: Ես նորից չափեցի և գրանցեցի իմ զարկերակի զարկերի թիվը: Գրանցեցի, թե ինչքան ժամանակում քանի մետր անցա:

Իմ զարկերակի զարկերի քանակը մեկ րոպեում սկզբում՝48

Իմ զարկերակի զարկերի քանակը մեկ րոպեում հեծանիվ քշելուց հետո՝103

Ես 18վ –ում անցա 40 մ

1 վ –ում կանցնեմ-40/18 մ

1ժ-ում կանցնեմ -8000 մ